ՀԱՍՏԱՏՈՒՄ Է
Տնօրեն _____
«27» սեպտեմբեր 2023
թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Հ. Հ. Յուսիսյան Տարրական դասընթացի գծով
մեթոդ. միավոր ՊՈՒԿ VIII դասարան
ուսումնական հատատության անվանումը, դասարան

Գևորգյան Լիլիա Գրիգորի
դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

«2023 2024» ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. *Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)*

8-րդ դասարանում սովորում են 12 աշակերտ՝ 8 տղա և 4 աղջիկ։Դասարանի ավագն է Ալեքս Աբրահամյանը, ով շատ կազմակերպված և հավասարակշռված է :

Աշակերտները ունեն տարբեր ընդունակություններ ու կարողություններ։Ընկերասեր են, համախմբված։ Ընդունակ են, հետաքրքրասեր, ձգտում են ավելիին։ Դասարանում տիրում են առողջ մրցակցային հարաբերություններ, կամեցող են, իրար օգնող։ Ուսման բնագավառում դրսևորում են պատասխանատու, կարգապահ վարք։

2. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

Կազմակերպել և մասնակից լինել հիշարժան տարելիցներին,ձևավորել արժեքային համակարգ բազմաբնույթ միջոցառումների միջոցով։Կազմակերպել աշակերտների մանկավարժահոգեբանական հետազոտություն, սոցիալական և ֆիզիկական պաշտպանություն :

3. Հայեցի դաստիարակություն

3.1 Հոգևոր դաստիարակություն

Աշակերտներին դաստիարակել հոգեպես առողջ, սեր ու նվիրվածություն սերմանել Հայոց աշխարհի, հայ ժողովրդի, հայոց պատմության և մշակույթի հանդեպ։ Օգնել աշակերտներին ճանաչել բարին, գեղեցիկը, օգտակարը։

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Ձևավորել գեղագիտական ճաշակ, աշխարհընկալում, գեղեցիկի նկատմամբ յուրահատուկ վերաբերմունք, զգացմունքների կառավարում։ Միջոցառումներին հասնել այն աստիճանի,որ աշակերտը ոչ միայն տեսնի,գնահատի, այլ նաև ստեղծի։

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

Սերմանել հայրենասիրություն,ծանոթացնել ազգային հերոսների կենսագրությանը։ Սեր ու հարգանք ձևավորել ՀՀ-ի հանդեպ՝ ընկալելով այն որպես անփոխարինելի արժեք։

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Բարձրացնել ֆիզիկական դաստիարակության դերը սպորտլանդիաների,զրույցների միջոցով: Կազմակերպել մարզական միջոցառումներ, որոնք նպատակաուղղված կլինեն սովորողի ֆիզիկական զարգացմանը, առողջության ամրապնդմանը:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Զարգացնել աշխատանքի մեջ ինքնաբավ լինելու,ուրախություն գտնելու կարողություններ,աշխատանքի միջոցով լավագույն արդյունքների հասնելու հմտություններ: Գաղափար ունենալ աշխատանքի նշանակության մասին: Նրանց մասնակից դարձնել հասարակական և նյութական արժեքներ ստեղծելուն:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Էկոլոգիական գիտակցության ձևավորում: Շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ուսուցում, արտանետումներից ու աղտոտումից զերծ պահելու կարողությունների ձևավորում:

4. Դպրոց-Ընտանիք կապը

Ամրապնդել դպրոց ընտանիք կապը՝ միշտ կապի մեջ լինելով ծնողների հետ քննարկել ուսումնադաստարակչական հարցեր՝ հաճախակի կազմակերպելով հանդիպումներ, իրազեկել ծնողներին նրանց երեխաների առաջադիմության, վարքի, հաճախումների, առողջության մասին: Առողջ համագործակցային մթնոլորտ պահպանել:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՈՒսումնական շաբաթ	*Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակությունը*	*Կատարողներ*
1	Գիտելիքի օր: Դասագրքերի բաշխում:	Դասղեկ
2	Ընկերասիրություն: Կազմակերպական հարցեր՝ ավագի, դասարանական խորհրդի կազմի ընտրություն:	Դասղեկ
3	Աշակերտների իրավունքներն ու պարտականությունները:	Դասղեկ
4	Զրույց նվիրված անկախության օրվան:	Դասղեկ և աշակերտներ
5	Զրույց «Հետաքրքրությունը լա՞վ հատկանիշ է, թե՞ վատ»: Կանխարգելման ուղիները տեխնածին վթարներից:	Դասղեկ
6	Անհատական պաշտպանության միջոցներ:	Դասղեկ
7	Աշակերտների գործողությունները հակառակորդի հարձակման ժամանակ:	Դասղեկ և աշակերտներ
8	Զրույց ‘’ՈՒսուցիչների և աշակերտների փոխհարաբերությունները’’:	Դասղեկ Աշակերտներ
9	Զրույց՝ աշխատանքը ազնվացնում է մարդուն:	Դասղեկ
10	Իմ հետաքրքրությունները և նախասիրությունները:	Աշակերտներ
11	Զրույց՝ ինչպես հասնել հաջողության:	Դասղեկ
12	Զրույց “ինչպես սովորել միայն լավ գործեր անել:	Դասղեկ
13	Զրույց՝ վատ սովորությունների հետևանքները:	Դասղեկ Աշակերտներ
14	Զրույց՝ ում կուզեի նմանվել:	Աշակերտներ
15	2023 թ-ի իմ ձեռքբերումները:	Աշակերտներ
16	Առաջին կիսամյակի ամփոփում:	Դասղեկ
17	Համացանց: Դրական և բացասական կողմերը:	Դասղեկ
18	Նոր տարի, նոր ծրագրեր	Աշակերտներ
19	Հայոց բանակի սխրանքները:Ֆիլմի դիտում	Դասղեկ
20	Առողջ հոգի առողջ մարմնում:	Դասղեկ
21	Զրույց՝ նվիրված Սուրբ Սարգսի տոնին:	Դասղեկ
22	Զրույց՝ ինչպես պայքարել անտարբերության դեմ:	Դասղեկ
23	Զրույց՝ ով է իսկական ընկերը	Դասղեկ Աշակերտներ
24	Բանավեճ՝ տղամարդկանց և կանանց գործերը ընտանիքում:	Դասղեկ Աշակերտներ
25	Զրույց՝ արդյո՞ք միշտ են ծնողները ճիշտ:	Դասղեկ և

		աշակերտներ
26	Ինչպես ապացուցել քո ճշմարտացիությունը:	Դասղեկ Աշակերտներ
27	Զրույց՝ ազնիվ և անկեղծ հարաբերություններ մեր դասարանում:	Դասղեկ Աշակերտներ
28	Հայտնի մարդկանց կյանքի պատմություններ:	Աշակերտներ
29	Վայրեր, որտեղ կուզեի լինել:	աշակերտներ
30	Զրույց՝ ինչպես չկորցնել հարազատ մարդկանց վստահությունը:	Դասղեկ Աշակերտներ
31	Զրույց՝ ծնողներս ինձ համար, ես՝ ծնողներիս:	Աշակերտներ
32	Զրույց՝ երկիր, որտեղ կցանկանայի ապրել	աշակերտներ
33	Զրույց՝ եթե ես կարողանայի:	Աշակերտներ
34	Երկրորդ կիսամյակի ամփոփում:	Դասղեկ

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Քննարկվող հարցեր	*Ժողովի համառոտ բովանդակությունը*	*Ծանոթություն*
Էքսկուրսիա	Մի շարք կազմակերպական հարցերի պարզաբանում:	
Ուսում, «Արմաթ» խմբակ	Ուսուցման բարելավում, խմբակների մասնակցության խրախուսում:	
Կարգապահություն	Կարգապահ ու պատասխանատու վարքի ձևավորում:	
Առաջին կիսամյակի ամփոփում	Կիսամյակային ամփոփիչ գնահատականների ներկայացում, ընթացիկ հարցերի քննարկում:	
Երկրորդ կիսամյակի սկիզբը	Կատարվելիք աշխատանքների քննարկում:	
Գարնանային արձակուրդների ճիշտ կառավարում	Ընթացիկ հարցերի քննարկում,	
Տարեկան ամփոփում		

ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Քննարկվող հարցեր	*Զրույցի համառոտ բովանդակությունը*	*Ծանոթություն*
Կարգապահություն	Կարգապահական հարցերի քննարկում:	

Պարտաճանաչ լինել	Պարտաճանաչ ներկայանալ դասերին։	
Հիվանդությունների կանխարգելում	Տաք հագուստ, հիգիենա։	
Դասապատրաստվածություն	Պատրաստ ներկայանալ դասերին։	
Առաջադիմություն	Անտարբերության զգացում։	
Առողջապահական հարցեր	Համաճարակային կանոններ։	
Առաջընթացը	Նկատելի առաջնթացի խրախուսում։	
Ներառական կրթություն	Համագործակցություն։	

ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ ՀԵՏ

Քննարկվող հարցեր	*Ծնողկոմիտեի նիստի համառոտ բովանդակությունը*	*Ծանոթություն*
Ծնողկոմիտեի կազմը	Նախատեսվում է ծնողկոմիտեի կազմի փոփոխություն։	
Կրթություն	Ուսումնական մակարդակի բարձրացում։	
Կարգապահական հարցեր	Կարգապահության ապահովում։	
Կիսամյակի ամփոփում	Կարգապահական և ուսումնական հարցերի քննարկում։	
Ընթացիկ հարցեր	2-րդ կիսամյակի հաջող սկիզբը։	
Ծնող-դպրոց կապը	Ծնողավարության մի քանի հարցերի քննարկում։	
Տարեկան ամփոփում		

Աշակերտական խորհուրդ

1. Աբրահամյան Ալեքս
2. Գալստյան Սյունե
3. Միլենա Հովսեփյան